



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 5 « 26 » 04 2017 թ.

Գիտական խորհրդում հնչեցված՝ «Երևանի պետական բժշկական համալսարանում կրթության արդի հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները» թեմայով գեկույցի արդյունքներով հանձնարարականներ տալու մասին:

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ. Ավետիսյանին, հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ա. Ավետիսյանի՝ «Երևանի պետական բժշկական համալսարանում կրթության արդի հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները» թեմայով գեկույցում,

**Որոշում է՝**

1. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ. Ավետիսյանին և գիտության գծով պրոռեկտոր Կ.Բ. Ենկոյանին՝ մինչև 2018թ. ապրիլ ամիսը մշակել ուսումնական պրոցեսում հետազոտական բաղադրիչի ներդրման մեխանիզմները:
2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ. Ավետիսյանին, հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ա. Ավետիսյանին՝ մինչև 2017թ սեպտեմբեր ամիսը գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել նույնանուն ամբիոնների միավորման, աշխատանքների տարակարգման և նոր ձևաչափով ուսուցման պրոցեսի կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների փաթեթ:
3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ. Ավետիսյանին և համակարգչային աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Մ.Գ. Հայրապետյանին՝ մինչև 25.05.2017թ. կենտրոնական մեթոդական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել «Համակարգչային քննությունների կազմակերպման և անցկացման կարգի» նախագիծը:
4. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ. Ավետիսյանին և «Դասախոսների որակավորման բարձրացման» բաժնի պետ Ս.Ա. Ազնաուրյանին՝ մինչև 25.05.2017թ. կենտրոնական մեթոդական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել «Դասախոսների վերապատրաստման կարգի» նախագիծը:
5. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ. Ավետիսյանին և հետբուհական ու շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ա. Ավետիսյանին, օտար լեզուների ամբիոնի վարիչ Վ.Մ. Բալաբանյանին, հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հ.Վ. Սուքիասյանին.
- 1) յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-25-ը I կուրս ընդունված ուսանողների շրջանում կազմակերպել օտար լեզուների իմացության թեստավորում, մշակել և համապատասխան մեթոդական հանձնաժողովում մինչև հունիս ամիսը հաստատել լեզուների իմացության տարբեր մակարդակ ունեցող ուսանողների համար դասավանդման ծրագրային նոր փաթեթ,



- 2) կազմակերպել դասախոսների համար օտար լեզվի ուսուցման և/կամ կատարելագործման դասընթացներ՝ ըստ ամբիոնների վարիչների կողմից ներկայացված զեկուցագրերի,
- 3) կազմակերպել օտար լեզվի դասընթացներ՝ կլինիկական օրդինատորների համար,
- 4) կազմակերպել հայոց լեզվի դասընթացներ օտարալեզու կլինիկական օրդինատորների համար:
6. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ.Ավետիսյանին և գլխավոր հաշվապահ Լ.Է.Պարսեղյանին մինչև 15.05.2017թ. մշակել ամբիոններում լրացուցիչ պարապմունքների համար դասախոսներին տրվող հավելավճարների միջինացված չափանիշների առաջարկություն:
7. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ.Ավետիսյանին՝ 2017-2018 ուստարում որպես փորձնական ծրագիր՝ III կուրսի «Բուժական գործ» մասնագիտության արտադրական պրակտիկական կազմակերպել ուստարվա ընթացքում:
8. Քաղցկեղի Վերահսկման Միջազգային Միության (UICC) նորընտիր նախագահ, Հորդանանի արքայադուստր Դինա Մայրեդին շնորհել ԵՊՀ Պատվավոր դոկտորի կոչում:
9. Հաստատել մագիստրատուրայի կանոնակարգի փոփոխություններն ու լրացումները:
10. Սույն որոշումը քննարկել համալսարանի ստորաբաժանումներում և ընդունել ի գիտություն:
11. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր Ա.Ա. Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ

ԳԻՏԲԱՐՏՈՒՄ



Բ.Գ.Դ.,ՊՐՈՖ.Ա.Ա.ՍՈՒՐԱՂՅԱՆ

Բ.Գ.Դ.,ՊՐՈՖ.Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ